ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 9 » հուլիսի 2020 թվականի № 201-Ա քաղաք Գյումրի

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 3/2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներով, հիմք ընդունելով թիվ ՇԴ/1137/02/18 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հունիսի 25-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետի 2020 թվականի ապրիլի 7-ի թիվ 01/11/1260-20 գրությունը, Էվելինա Մարտիրոսովայի, Լիլիթ Մարգարյանի և Օլգա Մարտիրոսյանի 2020 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի 3/2 շենքի թիվ 16 մեկ սենյականոց բնակարանը (ընդհանուր մակերեսը՝ 39,19մ^2) անհատույց, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով հատկացնել բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող, 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված ներքոհիշյալ քաղաքացիներին.

Մարտիրոսովա Էվելինա Ռոբերտի,

Մարգարյան Լիլիթ Ակրիբազի,

Մարտիրոսյան Օլգա Սերգեյի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝